

ՎԻԿՏՈՐՅԱ ԱՂԱՆՈՒՐՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԱՀԻՏ ՍԵՎՈՒՄՅԱՆ

Հայ մշակույթի պատմության մեջ նկատելի ներգրում ունեն Աղանուրյան ազգատոհմի մեծարելի դեմքերը: Նրանք սերում են Զուղայից, որտեղ ապրել են մինչև Շահ Աբասի արշավանքները: Հայ շատ բախտակիցների հետ գաղթել են Պարսկաստան և մինչև 1770-ական թվականներն ապրել Նոր Զուղայում: XVIII դ. վերջին տեղափոխվել են Հնդկաստան:

«Բազմավեպ», «Գեղունի», «Անահիտ» հանդեսներում պահպանված վավերագրերը վկայում են, որ Աղանուրյան գործիչները զբաղվել են բարեգործությամբ, կազմակերպել հանգանակություններ, միջոցներ ներդրել ազգային խնդիրներ լուծելու համար, կառուցել եկեղեցիներ, բացել կրթարաններ: Այս ազգատոհմի հարուստ կենսագրությունն իրենց գործունեությամբ լրացնում են հոգևոր գործիչներ Հարություն և Պետրոս Աղանուրյանները, պատմաբան, աստվածաբան ու թարգմանիչ Մկրտիչ Աղանուրյանը, որ Կալկաթայում 1820 թ. «Իմաստախնդրեան միաբանություն» կազմակերպության աթոռակալն է եղել: Աղանուրյան տոհմի մի շառավիղը՝ Աբրահամը, և իր որդիները ծնվել են Մադրասում: Աբրահամի կինը՝ Մարիամ-Թերեզան, Մուրատյան վարժարանի բարերար Աամուել-Մուրատի դուստրն էր: 1840 թ. ընտանիքը տեղափոխվում է Եվրոպա՝ հաստատվելով Նախ Փարիզում, հետո՝ Վենետիկում: Ղևոնդ Ալիշանը «Հայ-Վենետրում», «Մանկունիի», «Նվազքում» բավական համակրանքով է խոսում Աբրահամ Աղանուրյանի ազգանպաստ գործերի մասին: Մեզանում քիչ թե շատ ծանոթ անուն է Աբրահամ Աղանուրյանի թոռունհին՝ բանաստեղծ Վիկտորյա Աղանուրյանը:

Վ. Աղանուրյանի գրական գործունեությունը համեմատաբար քիչ է ուսումնասիրվել, մինչդեռ նա նկատելի հետք է թողել 1890-1900-ական թվականների արևմտահայ գրական կյանքում: Նրա բանաստեղծությունները ժամանակակիցների կողմից ընկալվել են մեծ սիրով ու հետաքրքրությամբ, և հեղինակը դեռևս կենդանության օրոք ձեռք է բերել գրական մեծ վարկ ու ճանաչում:

Բանաստեղծուհին ծնվել է 1855 թ. մայիսի 26-ին Պադուա քաղաքում: 1880 թ. Վ. Աղանուրյանը Նեապոլում ամուսնանում է իտալական իորհրդարանի պատգամավոր կոմս Կուրտո Բոմբիլիի հետ: 1890 թ. ընտանիքը տեղափոխվում է Վենետիկ: Գրական աշխարհում արդեն ճանաչված բանաստեղծուհին տպադրվում է «Գրական Հռոմ», «Կայծ», «Ազգային համայնապատկեր» հանդեսներում, «Նոր անթողգիա» մատենաշարում: 1896 թ. ապրիլին Վ. Աղանուրյանն ընտրվում է Վենետիկի Աթենական կաճառի գործուն անդամ: Թե՛ հասարակական, թե՛ գրական գործունեության մեջ, հատկապես հայ ժողովրդի համար արյունոտ ու տաղնապալի ժա-

մանակներում, «Չանացել է ազգային զգացման սուրբ կրակը» պահպանել: Դժնի կոտորածներից, Հայրենիքից եկող տազնապալի լուրերից «կրմբոստանար, կր փրփրեր երակներուն մեջ Հայ արյունն ընգվզող»¹: Փորձում էր ընթերցողներին լսելի դարձնել իր ժողովրդի երկար ու անողորմ մարտիրոսության ցավն ու տազնապը: Բաղձանքն էր բզկտվող Հայաստանի համար «ահեղորեն մեծաշուք երգ մը գրել, որ հոշոտեր, պատառպատառ աներ դահիճներուն մարդասպան արյունուռչտ ձեռներն»²:

Վ. Աղանուրյանը ստեղծագործել է իտալերեն: Նրա բանաստեղծություններն առաջին գիրքը՝ «Հավիտենական զրույցը», լույս է տեսնում 1900 թ., երկրորդը՝ «Նոր երգեր» ժողովածուն, 1908 թ.: «Մխիթարյան տպագրությունը» 1905 թ. հրատարակում է «Հավիտենական զրույց», իսկ 1910 թ.՝ «Նոր երգեր» բանաստեղծությունների ժողովածուների Հայերեն թարգմանությունները: 1910 թ. բանաստեղծուհին վախճանվում է չտեսնելով բանաստեղծությունների երկրորդ ընտրանու հայերեն հրատարակությունը:

«Նոր երգերի» բնաբանը ծանուցում է, որ ժամանակի իտալական մամուլը լայնորեն արձագանքել է Աղանուրյանի ստեղծագործություններին: Բանաստեղծներ Կարդուչչին, Լեոպարդին, Ադա Նեգրին նրան համարել են իտալական արգի բանաստեղծության ամենից գեղեցիկ դեմքերից մեկը: Նրա արվեստում գնահատել են մտածումների ինքնատիպությունը, զգացման հազվագյուտ խորությունը: «Մրցանակդ մուսանների մոտ է», – այսպես է դիմում նրան Կարդուչչին³: «Իտալիայի գրագիտուհիներու կիսադեմքեր» անթոլոգիա-դիրքը բացվում է Վիկտորյա Աղանուրյանով:

«Մեր դրականությունը» աշխատանքում, անդրադառնալով XIX դ. երկրորդ կեսի դրական անցուդարձին, Ա. Չոպանյանը նկատում է, որ 1894-1896 թթ. Հայ ժողովրդի համար բարդ ու դժվարին ժամանակներում արեւմտահայ մտավոր կյանքն առավել աշխուժանում է գաղութներում: Այս իմաստով քննադատը «դադարապահության-հաճոյական» նորություն է համարում Աղանուրյանի քնարերգությունը⁴: «Անահիտ» հանդեսի «Դեմքեր» խորագրի տակ նրա մասին դրված է. «Իր բանաստեղծությունը խորը, եվրոպական գեղեցկագիտության բոլոր ստացիկ հրապույրներուն ներքև կտրոփե պարզ, սրտաբուխ զգացողություն մը, որ կմատնէ քերթողուհիվն արենակցությունը Քուչակին ու Աբովյանին հետ»⁵:

Վերոնշյալ ժողովածուներում չընդգրկված բանաստեղծությունները մեզ են հասել գրական տարբեր հանդեսների էջերից՝ «Բազմավեպ», «Գեղունի», «Անահիտ», «Կոչնակ Հայաստանի», «Երիտասարդ Հայուհի»: Ա. Չոպանյանը մտադիր էր այդ էջերն ի մի բերել մի ժողովածուում «նրա գրականությունը մեկ ընդհանրության մեջ տեսնելու» միտումով: Գրականագետն ուշադրություն է հրավիրում այն բանաստեղծություններ-

¹ Վ. Աղանուրյան. Նոր երգեր. Վենետիկ, 1910, էջ 13:

² Նույն տեղում, էջ 7:

³ Նույն տեղում:

⁴ Ա. Չոպանյան. Մեր դրականությունը. Փարիզ, 1926, էջ 15:

⁵ «Անահիտ», 1903, №1, էջ 25:

րի վրա, որոնք «Հայ տառապանքի երգերն են՝ հայու պես կամ հայոց համար զգացած»⁶:

Աղանուրյանին թարգմանել են Ա. Չոպանյանը, Ա. Քասաբանտիլյանը, Ղ. Ալիշանը, հիմնականում Ա. Ղազիկյանը: Հայտնի է, որ իր բանաստեղծությունների հայերեն թարգմանության առթիվ Վ. Աղանուրյանը Ա. Ղազիկյանին ակնածանքով պատասխանել է. «Թարգմանելու թույլտվություն կխնդրեք ինձե, ես կպատասխանեմ սրտագին շնորհակալ ըլլալով Ձեզի... և ես հպարտ պիտի ըլլամ ներկայացվելուս ու ճանչցվելուս համար Ձեզմով Հայաստանի եղբայրներուս...»⁷:

Վ. Աղանուրյանի կյանքն ու գրական գործունեությունը համընկավ Իտալիայում ազգային-ազատագրական պայքարի և դրան հաջորդած քաղաքական բուռն իրադարձությունների ժամանակաշրջանին: Ժամանակի գեղարվեստական մտածողության բնորոշ գծերն էին քաղաքացիականությունն ու հայրենասիրությունը: Թեալիստական արձակում մեծ տեղ էին տալիս անձնական-հոգեբանական թեմատիկային, սոցիալ-քաղաքական հարաբերություններին, պոեզիայում տիրապետող բանաստեղծական ժանրերն էին էլեգիան, օդան, մադրիգալը, սոնետը, կրոնական-հոգևոր թեմաներով երգերը: Աղանուրյանի «Հավիտենական զրույց» և «Նոր երգեր» շարքերի բանաստեղծությունները գեղարվեստական ինքնատիպ դրսևորումներ են: Բանաստեղծուհին արդիական հնչեղություն ունեցող հարցերի մասին խոսում է գաղափարական հստակությամբ, այլաբանական պատկերներով, բնանկարի գեղարվեստական հմուտ համադրությամբ:

«Հավիտենական զրույց» ժողովածուն բաղկացած է երեք՝ «Հավիտենական զրույց», «Միջանկյալ», «Զարթնում», բաժիններից: Առաջաբանը բովանդակում է կենսագրական տեղեկություններ բանաստեղծուհու մասին: Շարքում տեղ են գտել «Երբեք», «Միրո երգը», «Տարակուսի երգը», «Ատելություն երգը», «Վերջապես», «Լուսինին» բանաստեղծությունները, որ երազած հասարակության ու իրականության միջև խորությամբ ընկալված հակասության չափածո պատկերներ են: Իսկ «Վայրկյաններ», «Ամառային փոթորիկ», «Անձրևեն վերջ» բանաստեղծությունները հոգեկան տարբեր տրամադրությունների արդյունք են՝ մերթ տխուր՝ սևակնած գիշերվա նման, մերթ ուրախ՝ ինչպես պարզկա արշալույսները:

«Միջանկյալ» բաժնի «Դաշտանկարներ», «Ուրվագիծ», «Իրիկուն», «Անձրև» և այլ բանաստեղծությունները միայնության, աշնան անձրևների միապաղաղ տարափի ձայներն են հիշեցնում: Անձրևող աշնան գույները բաժնի մյուս բանաստեղծություններում հուսահատության, լքվածության ցավի տխուր պատկերներ են:

«Զարթնում» բաժնում երազի ու իրականության փոխհարաբերությունն այլաբանական հնարք է գեղեցիկի ու կատարյալի մասին խորհելու: Այս շարքում բանաստեղծուհու չափածոյի կենսախինդ էջերն են: «Զարթնում», «Արևուն մեջ», «Իրիկուն ապրիլի», «Երազ» և այլ բանաստեղծություններ մարդկանց ձգտումների ու երազների մասին են: Նրանք անդուլ ճիգերով ձգտում են փառքի լեռը բարձրանալու («Փառք»), և

⁶ «Անահիտ», 1909, №1-8, էջ 178:

⁷ Վ. Աղանուրյան. Նոր երգեր, էջ 13:

ջանքերը թեկուզ հաղթությամբ էլ չավարտվեն, բայց «այսօր քաղենք պիտի եղի՞ճ, որ վաղը...լեռներու վրա մանիշակ»⁸:

Բանաստեղծուհին հետաքրքրություն էր ցուցաբերում իր ժողովրդի վարք ու բարքի, կենցաղի, գրականության հանդեպ: Իր իսկ խոստովանությամբ՝ «իրեն հայրենական արյունի հետ մնաց տպավորություն մը այն մրրկոտ պատմություններուն ու ծարավ մը, արևու մոլություն մը հանդեպ նախնյաց գիրն ու հիշատակները ու գարշանք մը բոլոր մեզբերուն, ամպերուն դեմ, զարհուրանք մը բոլոր սահմաններուն դեմ»⁹, որոնցից հետո է արարչադիր Արարատը: Չնայած թեմատիկ բազմազանությանը՝ ժողովածուի շարքերը տրամաբանորեն ամբողջացած են՝ բնության շոշափելի պատկերներից մինչև խորհրդածությունները՝ մարդբնություն փոխհարաբերությունների, մարդու հոգևոր նկարագրի և աղբային-սոցիալական տարբեր խնդիրների շուրջ:

Մարդկային կյանքի հավիտենական հակասությունների մասին է «Հավիտենական զրույց» ժողովածուն՝ գրված հակադրության սկզբունքով: Զրույցների քնարական հերոսները տարածություն ու ժամանակ հաղթահարած գաղափարակիրներ են: Իրականությունից դժգոհ բանաստեղծուհին «Այդ», «Զմուսած կոլիբրիի մը», «Պայծառ աստղեր», «Գիշերային» բանաստեղծություններում հյուսում է ապագայի մասին իր երազները, իսկ փոքրիկ թռչնակի կամ վառվող աստղերի այլաբանական կերպարները «դժնդակ տազնապների» հակապատկերներն են: Ժողովածուի «Եսայի», «Սուրբ Մարկոսի ձիերը», «Գիշերային» բանաստեղծությունները առավել համոզիչ ու հաջողված են կերպարների, իրադրությունների շարադրման պատմական-ժամանակագրական մանրամասներով:

«Եսայի» քերթվածում կարծեք անցյալի խորխորատներից լսվում են փայլակող հեսանասուր սրերի շաչյունը, լարված ձիգ աղեղների ու մարտակառքերի մրրկոտ ձայները: Բանաստեղծուհու գրչի տակ այս ամենն անցյալ է և միաժամանակ կրկնվող պատմություն մարդկանց փառամոլություն և գործած անիրավությունների: Նույնն է մնացել մարդկային էությունը՝ «հին ըզգեստովը կուգայ, զոր մեռած դար մը հաղցուց»: Նույնն է, թերևս, ապրելու նպատակը՝ «բացել երազներու գուռը մեծ»¹⁰:

Այնքան խոսուն է Աղանուրյանի «Լուռությունը», որ կարծես այն իջնում է մի հանդիսավոր օրհնություն: Դեռևս 1896 թ. Ալիշանի հանձնարարությունով Ա. Ղազիկյանը թարգմանում է բանաստեղծությունը, որը նախ լույս է տեսնում «Բազմավեպում», ապա՝ առանձին: Ղ. Ալիշանն այս բանաստեղծության առթիվ դրել է. «Լուռության» հեղինակը գիշերոյ սիրական է, բայց չկան սիրաբանությունք, այլ բնության ու մարդկային կենաց վերաբերյալ գաղափարք՝ զուգավորություն գիշերոյ ու լուռության զգացման»¹¹: Բանաստեղծությունում իշխում է հավասար «Գերագույն ուժի բարություն» հանդեպ: Հստակ գծագրվում են երկու ներհակ աշխարհներ՝ մարդկեղեն մարդն իր ծով մեղքերով և մեծանձն ու «Գերագո բարձրա-

⁸ Վ. Աղանուրյան. Հավիտենական զրույց. Վենետիկ, 1905, էջ 77:

⁹ Նույն տեղում, էջ 14:

¹⁰ Նույն տեղում, էջ 87-88:

¹¹ «Բազմավեպ», 1903, № 10, էջ 25:

«երձը», որից նրանք փրկուեցին են աղերսում «ձեռքերն աղերսավոր երկինք պարզած»:

Կրոնական-հոգևոր թեմաներով գրված ստեղծագործությունները, ինչպես նկատել է Ա. Չոպանյանը, «գեղումներն են հոգիի մը, որ ինքզինք ամբողջապես կբանա իր Աստծոյ և անոր կհանձնեն իր բոլոր մտածումներն ու իր ամբողջ կյանքը... Հոն թրթռալը կզգացվի հրավառ ու միստիքական հավատքի մը, որ առանց ճիգի կհասնի հափշտակութեան կատարներուն, որոնք Արևմուտքտի մեջ սակավաթիվ ընտրյալներու միայն վերապահված են»¹²: Հոգևոր թեմաներով բանաստեղծություններն Աստվածաշնչից վերցված պատումների գեղարվեստական մշակումներ են ու չափածո փոխադրություններ: «Տեսիլ», «Պատշգամբեն», «Մունուդ», «Ջերմ» քերթվածների հիմքում Կտակարանի պատվիրանների և քրիստոնեական վարդապետության դասերով բարոյական վերածննդի ու հոգևոր կատարելության գաղափարն է:

Աղանուրյանին չափազանց հուզել է իր երկրի, ժողովրդի քաղաքական ճակատագիրը: Այնպես կուզենար, որ անցյալում լինեն չարիքները, նախճիրները՝ «անմիտ ու եղեռնաթույլը»: «Միջանկյալ» և «Ջարթում» շարքերի հայրենասիրական բանաստեղծություններում («Երբեք» «Ապրիլ», «Մունուդ», «Ջերմ») նա լիաբուռն արձագանքում է իր ժողովրդի ազգային ինքնության, հինավուրց ազնվական վեհության և սեփական ուժն ու իրավունքները վերագտնելու ազգափրկիչ խնդիրներին: Դրանց իրականացումը չի պատկերացնում առանց ազատագրական պայքարի: «Կրակին քով» բանաստեղծությունում մասնավորապես դրոմ է.

Հանդգնորեն՝ բայց ուզեց
Ան երազել ու հուսալ
Որ պիտի ժայռը փլչեր,
Որ կատարվեր պիտի իր
Իղձը շամբուչ, իղձը միակ,
Այն, որ երկիրս էր տիրելու սահմանված...¹³:

«Նոր երգեր» ժողովածուում Աղանուրյանի դրական համոզմունքները զարգանում ու նորովի են դրսևորվում բանաստեղծական նոր ձևերում մադրիզայներ, մանրերգեր, քնարական օրագրեր: 1908–1909 թթ., երբ Արևմտյան Հայաստանում տիրում էր բռնություն, տեղահանության ու կոտորածի սարսափը, «Հեռավոր եղբայրներուս», «Ջատիկ», «Հայկական Ջատիկ» բանաստեղծություններում հեղինակը հավատացած է, որ կանցնեն մղձավանջները և իր հայրենիքում դեռ կհնչեն օվսանաններ որոտուն:

«Նոր երգերի» «Վաղիվ», «Երազին մեջ», «Ուշ» քերթվածներում անվերջ սպասումների երգն ավարտվում է այն մտայնությամբ, թե աշխարհում խախտվել է ներդաշնակությունը մարդկային բնության ու նախաստեղծ բնության միջև: Մովածով գաղտնիքներ ունեն կյանքը,

¹² Ա. Չոպանյան. Հայ ազգն ու իր մշակութային արժեքը. Փարիզ, 1946, էջ 23:

¹³ Վ. Աղանուրյան. Հավիտենական գրույց, էջ 100–101:

ժամանակը: Ամեն ճիգ ու ջանք՝ այս հակասություններն ըմբռնելու, ավելի են մղում մեզ անիմանալի ծանծաղուտը «Վաղիվում»:

Տեսքով զվարթ, բայց ոչ երբեք հասկացված,
Անցա ես այս կյանքեն իբրև անծանոթ¹⁴:

«Նոր երգերը» կյանքի երգն է, ուր իրականությունն է դարձել գրչի համար խոհերի ներշնչարան: Բանաստեղծուհին անդրազառնում է մարդկանց կողմից հորինված ըրիտ օրենքներին, սոցիալական անհավասարությունը: Մազրիդալները տիկիներին նվիրված գովեստներ են: Բնության նկարագրություններով բանաստեղծությունները նվիրված են իտալիայի դիտարժան վայրերին, իսկ որոշ ստեղծագործություններում բնության խայտաբղետ ձայները տրամադրում են խորհելու մարդու բարդ ու հակասական էություն, նրա վեհ ու նվիրական ձգտումների մասին: Բավական նկատելի է բելգիացի արձակագիր Մորիս Մետերլինկի իդեալիստական հայացքների ազդեցությունը: Իր մի բանաստեղծության վերնագրով «Մետերլինկ կարդալով», կարելի է անվանել բանաստեղծությունների այն շարքը, որտեղ Աղանուրյանը վերաիմաստավորում ու զարգացնում է «ոգեղեն մշակույթի» բովանդակությունը: «Վայրկյաններ», «Լուսնական դյուլթանքներ» բանաստեղծություններում մարմին ու ձև են առնում օրենքներից, նյութական ձգտումներից մաքուր մարդկային իմացականության բոլոր դրսևորումները: Եվ «Ե՞րբ»-ում հնչում է հարցը:

Սրտե փրթած դուք երգեր
Երբ պիտի դուք հավասարիք իրիկվան,
Արշալուսի, ծովու հոտին, ծաղիկին:

Ուշագրավ են մանրերգերը, որ կարծեք վաղանցիկ հույզերի տպավորությամբ շտապով արված գրառումներ են հիշեցնում: Իսկ չափածո հուշագրություններն ինքնակենսագրական բնույթ ունեն և նվիրված են ծանոթ ու հարազատ մարդկանց: Նրանց մասին դրում է շնորհակալ բառերով ու իր գրչին բնորոշ անկեղծությամբ: Էպիգրաֆներն արծարծում են հրատապ թեմաներ՝ բնորոշ ժամանակի քաղաքական անցուղարձին: «Ժամը», «Շելլեի հուշարձանին», «Երկգիմին», «Վենետիկո զավակներուն»՝ նվիրված են ազատության նվիրյալներին: Դրվատանքի խոսքերում ու բնութագրություններում զգացվում է բանաստեղծուհու համակրանքը «հեղափոխական եղբայրներու» գործի հանդեպ:

Վ. Աղանուրյանի ստեղծագործությունն ունի ազգային-ճանաչողական նշանակություն: Նրա գրական ժառանգությունը հայ գրականության բաղկացուցիչ մասն է: Օտարագիր հայ հեղինակը «չի օտարվել» հայ գրականությունից. նրա արվեստում տիրապետողը ազգայնամետ տրամադրությունն է: Եվ պատահական չէ, որ Ա. Ղազիկյանը «Հայկական նոր

¹⁴ Վ. Աղանուրյան. Նոր երգեր, էջ 31:

մատենագիտութեան» մատենագրութեան ցուցակում ընդգրկել է Վիկտորյա Աղանուրյանի ստեղծագործութիւններ՝ այն համարելով «ազգի մտավոր կյանքի շտեմարան»: Աղանուրյանի գրական գործունեութիւնը աշխուժացող հայ-իտալական գրական կապերի խոսուն ապացույց է: Բանաստեղծուհին լուսամիտ մեծերից ժառանգել էր իր երկրի, ժողովրդի ճակատագրով ապրելու արժանապատվութիւնը: Եվ պատահական չէ, որ իր ստեղծագործութիւնները, թեկուզև թարգմանաբար մեզ հասած, համարում էր սիրո ու համակրանքի սրտագին ողջուններ՝ իր հայրենակիցներին ուղղված: Բանաստեղծուհին կարևորում էր դրականութեան դերը մարդկանց հոգևոր ու բարոյական դաստիարակութեան գործում: Մարդկային հույզերով լեցուն բանաստեղծութիւնները հիմք են տվել Ալիշանին նկատելու, թե «Աղանուր բանաստեղծուհի է ոչ միայն նրբազգաց, այլև խորագագաց և հմուտ քերթող՝ իտալական լեզվի տաղաչափութեան»¹⁵:

ЛИТЕРАТУРНОЕ НАСЛЕДИЕ ВИКТОРИИ АГАНУРЯН

ՆԱՆԻՏ ՏԵՎՍՄՅԱՆ

Резюме

События и поэтические традиции 1890-1900-х годов ярко отразились на художественной мысли и поэзии Виктории Аганурян. Поэтесса родилась в 1855 г. Она жила и творила в Италии. Несмотря на то, что ее стихотворения с большим интересом воспринимались современниками – армянскими и итальянскими критиками, тем не менее ее творчество не удостоилось достаточного внимания литературоведов. Ее основной темой является национальная и политическая жизнь с христианско-библейским учением. Во всех ее произведениях: миниатюрах, мадригалах и мемуарах отражалась разнообразная пестрота человеческих чувств, переживаний и настроений. Виктория Аганурян умерла в 1910 г. По оценке Гевонда Алишана – «Аганурян – поэтесса не только с тонким чутьем, но и глубоко чувствующий и искусный стихотворец стихосложения итальянского языка».

VICTORIA AGHANURYAN'S LITERARY HERITAGE

ANAHIT SEVUMYAN

Summary

Events and poetic traditions of the 1890s-1900s reflected brilliantly on Victoria Aghanuryan's artistic idea and poetry. The poetess was born in 1855. She lived and created in Italy. Though her

¹⁵ Ղ. Ա լ ի շ ա ն. – «Գեղունի», 1903, №1–10:

poems were accepted by her contemporaries – Armenian and Italian critics with great interest, no one has paid enough attention to her work. The ideological foundation of her literature is to teach the Christian-biblical ideas. Her miniatures, madrigals and memoirs are famous for the variegated descriptions of human emotions and sense. Victoria Aghanuryan died in 1910. In Ghevond Alishan's appreciation 'Aghanuryan is not only a sensitive poetess but also a heartfelt and skilful master of metrics of the Italian language'.